ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ռազմավարություն

Ներածություն

Կենտրոնական բանկը, ձգտելով իրականացնել թափանցիկ և կանխատեսելի քաղաքականություն, մշակում և հրապարակում է հաջորդ երեք տարիների իր ռազմավարությունը՝ ուղղված հանրությանը, ֆինանսական համակարգին, գործընկերներին, Կենտրոնական բանկի անձնակազմին և այլ շահառուներին:

2018-2020 թվականների ռազմավարությունը սահմանում է Կենտրոնական բանկի ռազմավարական ոլորտները և ամփոփում դրանց զարգացման ուղղությունները:

2018-2020 թթ. ռազմավարությունն ուղղված է Կենտրոնական բանկի նախորդ տարիների ձեռքբերումների հետագա զարգացմանը և արդի մարտահրավերներով պայմանավորված նոր ուղղությունների սահմանմանը:

Կենտրոնական բանկն իր ռազմավարությունը իրականացնելիս առաջնորդվում է միջազգային լավագույն փորձով և ստանդարտներով:



Արժեքներ.

Անկախություն. Իր նպատակներին հասնելու գործիքակազմի ընտրության և որոշումների կայացման մեջ Կենտրոնական բանկն անկախ է:

Արհեստավարժություն. Կենտրոնական բանկի արհեստավարժ անձնակազմի միջոցով մարտահրավերներին ժամանակին և բարձր որակով արձագանքելու ունակություն:

Թափանցիկություն. Իր գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվության բաց, պարզ և ժամանակին տրամադրում շահառուներին:

Տեսլական.

Լինել վստահելի իր շահառուների համար, կայուն՝ իր քաղաքականության մեջ՝ միաժամանակ մնալով առաջադեմ և զարգացող կառույց:

Առաքելություն.

Կենտրոնական բանկի առաքելությունը գների և ֆինանսական կայունության ապահովումն է: Գների կայունության ապահովման նպատակով Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականություն, իսկ ֆինանսական կայունության ապահովման համար՝ մակրոպրուդենցիալ քաղաքականություն:

Դրամավարկային և մակրոպրուդենցիալ քաղաքականությունների փոխազդեցությունները



ՀՀ կենտրոնական բանկի գերակա ռազմավարական ոլորտների շրջանակը



- Ինստիտուցիոնալ զարգացման ոլորտներ
- 2018-2020 թթ. ռազմավարական ոլորտներ
- ԿԲ քաղաքականությունների շրջանակ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գների կայունության ապահովում՝ նախադրյալներ ստեղծելով երկարաժամկետ հատվածում կայուն տնտեսական աճի ապահովման համար:

Գների կայունությունը հասարակության գնաճային սպասումների խարսխումն է գնաճի նպատակին: Դա ենթադրում է գների մակարդակի այնպիսի փոփոխություն, որը ազդեցություն չի ունենում տնտեսավարող սուբյեկտների կողմից ծախսումների, խնայողությունների, ներդրումների կատարման և այլ որոշումների կայացման վրա:

Զարգացման ուղղություններ

1. *Դրամավարկային քաղաքականության վերլուծության կատարելագործում և կանխատեսումների որակի բարելավում:*
2. *Դրամավարկային քաղաքականության նկատմամբ վստահության մեծացում և առավելագույն ընկալելիության ապահովում:*

ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական համակարգի կայունության և անխափան գործունեության ապահովում:

Ֆինանսական կայունությունը բնորոշվում է որպես մի իրավիճակ, երբ ֆինանսական համակարգը բնականոն կերպով իրականացնում է ֆինանսական միջնորդի իր ֆունկցիան (տնտեսության ներկա և ապագա զարգացումների վրա առանց անցանկալի ազդեցությունների) և, միևնույն ժամանակ, ի վիճակի է դիմակայելու բացասական շոկերին: Ֆինանսական կայունության խնդիրը ոչ թե մեկ առանձին ֆինանսական հաստատության, այլ ամբողջ ֆինանսական համակարգի կայունության ապահովումն է:

Զարգացման ուղղություններ

1. *Մակրոպրուդենցիալ քաղաքականության վերլուծությունների, համակարգային ռիսկերի բացահայտման և գնահատման մեխանիզմների մշտական կատարելագործում:*
2. *Մակրոպրուդենցիալ քաղաքականության առավելագույն թափանցիկության և ընկալելիության ապահովում:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական համակարգի բնականոն գործունության և զարգացման ապահովում:

Զարգացման ուղղություններ

1. *Միջազգային զարգացումներին և լավագույն փորձին համապատասխան ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության զարգացում՝ համաձայն բանկային վերահսկողության Բազելյան (Basel 3), Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության (IOSCO), Կենսաթոշակային վերահսկողների միջազգային կազմակերպության (IOPS), Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IAIS) սկզբունքերի:*
2. *Ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգի զարգացում՝ շուկայական վարվելակերպի վերահսկողության գծով:*
3. *Շուկայական վարվելակերպի վերահսկողության ուղղությամբ կարողությունների զարգացում:*

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գործուն և անվտանգ վճարահաշվարկային համակարգի ապահովում ու զարգացում:

Զարգացման ուղղություններ

1. *Նորարարական վճարային ծառայությունների (գործիքների) և վճարումների ոլորտում ֆինանսական տեխնոլոգիաների զարգացում, ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգի (RTGS) արդիականացում ու կատարելագործում:*
2. *Ֆինանսական համակարգի կայունության ամրապնդման համատեքստում արտասահմանյան դրամական փոխանցումների հասանելիության և ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացում:*

ԱՐԺՈՒՅԹԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ ԵՎ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Տնտեսության բոլոր սուբյեկտների համար կանխիկ դրամի նկատմամբ ձևավորվող պահանջարկի անխափան բավարարում:

Դրամանիշերի թողարկումների միջոցով ազգային արժեքների ներկայացում:

Զարգացման ուղղություններ

1. *Բարձրորակ կոմպոզիտային հումքով, ժամանակակից պաշտպանական հատկանիշներով նոր սերնդի թղթադրամների թողարկում:*
2. *Նոր սերնդի թղթադրամների շրջանառության պայմաններում դրամանենգության դեմ պայքարի զարգացում:*

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ

Արժեթղթերի արդար գնագոյացման, թափանցիկ և վստահելի շուկայի ապահովում և զարգացում:

Արժեթղթերում ներդրողների շահերի պաշտպանություն:

Զարգացման ուղղություններ

1. *Արժեթղթերի շուկայի մասնակիցների, ներդրողների, այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի համար արժեթղթերի շուկայի նոր որակյալ գործիքների ստեղծմանն աջակցում:*
2. *Ընկերությունների համար կապիտալի շուկայի հասանելիության բարձրացմանը նպաստում, այդ թվում՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:*
3. *Միջազգային պրակտիկայում ընդունված ռեպո պայմանագրերի հիման վրա ռեպո գործարքների կնքում, ինչպես նաև խորը ու իրացվելի դրամական շուկայի ձևավորման խթանում:*
4. *Արժեթղթերի շուկայի ենթակառուցվածքի (բորսայի և կենտրոնական դեպոզիտարիայի) շարունակական զարգացման, արժեթղթերով առևտրի և հաշվարկների լավագույն ստանդարտների և պրակտիկայի ներդրման խթանում:*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների անվտանգ և իրացվելի կառավարում:

Զարգացման ուղղություններ

1. *Ֆինանսական նոր գործիքներում ներդրում և ներդրված գործիքներով մարտավարությունների կատարելագործում:*
2. *Ֆինանսական ռիսկերի գնահատման մեթոդների և գործիքների կատարելագործում:*
3. *Պահուստների ռազմավարական տեղաբաշխման այլընտրանքային մոտեցումների մշակում և ներդրում:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ

Ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն:

Ֆինանսական կրթման միջոցով բնակչության անձնական ֆինանսների կառավարման կարողությունների բարձրացում:

Զարգացման ուղղություններ

1. *Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ միջավայրի և կարգավորման դաշտի ապահովում:*
2. *Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններում սպառողներին միտված մշակույթի ձևավորում:*
3. *Հանրության ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացում:*

ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի կազմակերպում ու կարգավորում:

Զարգացման ուղղություններ

1. *ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի վերլուծություն և գնահատում:*
2. *Կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացում՝ հաշվի առնելով բացահայտված ռիսկերն ու առկա մարտահրավերները:*
3. *ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի շարունակական համապատասխանեցում միջազգային պահանջներին:*

ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Միջազգային չափանիշներին համապատասխան ուսումնահետազոտական վերլուծությունների/աշխատանքների իրականացում:

Զարգացման ուղղություններ

1. *Ուսումնահետազոտական կենտրոնի միջազգային հեղինակության բարձրացում՝ նպաստելով Դիլիջանի՝ որպես տարածաշրջանային ուսումնահետազոտական կենտրոնի ճանաչմանը:*
2. *Միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան հետազոտական աշխատանքների իրականացում, որոնք միտված են Կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:*
3. *Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում անցկացվող միջոցառումների բովանդակության շարունակական արդիականացում, որը թույլ կտա դիմակայել արդի ժամանակաշրջանի մարտահրավերներին:*
4. *Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում անցկացվող միջոցառումների մասնակիցների շրջանակի ընդլայնում՝ ներառելով Կենտրոնական բանկի շահառուներին, որը նոր որակ կհաղորդի Կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականության ընկալմանը՝ բարձրացնելով քաղաքականության արդյունավետությունը:*

Հետազոտությունները ռազմավարական ոլորտների իրագործման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման հիմքն են:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ

ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կենտրոնական բանկի գործունեությունն ապահովող գործընթացների և տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործում:

Զարգացման ուղղություններ

1. *Գործընթացների արդյունավետության մակարդակի բարձրացում:*
2. *Կենտրոնական բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների ամբողջ ենթակառուցվածքի, ծրագրային համակարգերի անխափան աշխատանքի ապահովում, զարգացում ու կատարելագործում:*

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Կենտրոնական բանկի ռազմավարական ուղղությունների իրականացման համար արհեստավարժ մարդկային ռեսուրսների ապահովում:

Զարգացման ուղղություններ

1. *Անձնակազմի հավաքագրման, ընտրության և տեղաբաշխման գործիքակազմի արդիականացում:*
2. *Անձնակազմի մասնագիտական գիտելիքների և անհրաժեշտ հմտությունների շարունակական զարգացում:*
3. *Անձնակազմի պահպանմանն ուղղված միջոցառումների մշակում:*
4. *Կենտրոնական բանկում կորպորատիվ մշակույթի կատարելագործում:*

ԿԲ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկի անձնակազմի անվտանգության, գործունեության անընդհատության և տեղեկատվական անվտանգության ապահովում:

Զարգացման ուղղություններ

1. *Կենտրոնական բանկի ֆիզիկական և տեղեկատվական անվտանգության համակարգի կատարելագործում:*
2. *Բանկային համակարգի գործունեության անընդհատության միասնական համակարգի ստեղծում:*

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականության նկատմամբ վստահության մեծացում:

Զարգացման ուղղություններ

1. *Բանկի շահառուների հետ հարաբերությունների բարելավում և հետադարձ կապի ապահովում:*
2. *Հասարակայնության հետ հաղորդակցման միջոցների ու ուղիների կատարելագործում:*